ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՋԱՎԱՀԱՌԼԱԼ ՆԵՐՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՌԱԴՀԱԿՐԻՇՆԱՆԻՆ

ԴԵԼՀԻ

Խոր վշտով Ձերդ Գերազանցության կներկայացնենք Մեր ցավակցությունը Հայ Եկեղեցիի անունով, Ձեր մեծ երկրի մեծանուն վարչապետ, խաղաղության և ժողովուրդներու բարեկամության պաշտպան Ջավահառլալ Ներուի մահվան առթիվ:

Թող Աստված անոր հոգին լուսավորէ:

Թող Հնդկաստանը և հնդիկ ազնիվ ժողովուրդը ապրին ու վարգանան խաղաղության և բարօրության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 մայիս 1964
ԷՋՄԻԱԾԻՆ

ԱԶՆՎԱՓԱՅԼ ՏԻԿԻՆ ԻՆԴԻՐԱ ԳԱՆԴԻԻՆ

ԴԵԼՀԻ

Ձեր մեծ սուգի այս օրը, հանուն Հայ Եկեղեցիի, կուգանք Ձեզ ներկայացնել համայն հայ հավատացյալ ժողովուրդի և անձամբ Մեր խոր վշտակցությունը: Ձեր հանգուցյալ հայրը ոչ միայն մեծագործ առաջնորդն էր հնդիկ ազնիվ ժողովուրդին, այլ նաև մեր օրերու մեծահոգի ու հեղինակավոր պետական գործիչներեն մին; ներշնչված մարդասիրության, աշխարհի խաղաղության և ժողովուրդներու անկեղծ բարեկամության վեհ իդեալներով:

Հայ ժողովուրդի հոգևոր բազմադարյան կեդրոն Ս. Էջմիածնի Սեղանի առաջ Մենք կաղոթենք, որ Աստված խաղաղության և լույսի մեջ ընդունի Ջավահառլալ Ներուի արդար հոգին և Ձեզ պարգևե կենաց երկար տարիներ, որպեսզի շարունակեք վառ պահել այն լուսավոր ջահը, որ այժմ Ձեզի և Ձեր ժողովուրդին կփոխանցվի, Ձեր անմոռանալի հոր վախճանումով:

Խաղաղությո՛ւն և բարօրությո՛ւն և աստվածային զորությո՛ւն Ձեր մեծ հայրենիքին՝ Հնդկաստանին և հնդիկ բարեսիրտ և ազնիվ ժողովուրդին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 մայիս 1964
ԷՋՄԻԱԾԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊՐ. ԳՈՒԼԶԱՐԻԼԱԼ ՆԱՆԴԱՑԻՆ

ԴԵԼՀԻ

Խոր վշտով Ձերդ Գերազանցության և Հնդկաստանի կառավարության կներկայացնենք Մեր անկեղծ ցավակցությունը Ձեր մեծանուն նախորդի, խաղաղության և ժողովուրդներու բարեկամության ախոյանի, հանգուցյալ Ջավահառլալ Նեռուի մահվան առթիվ:

Թող Աստված անոր հոգին լուսավորե:

Թող Ձեր երկիրը և հնդիկ մեծ ժողովուրդը ապրին ու վարգանան խաղաղության և բարօրության մեջ:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 մայիս 1964
ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խնդրում ենք ընդունել մեր խորին գնահատանքը մեր սիրեցյալ պրեմիեր մինիստր Ջավահառլալ Նեռուի մահվան առթիվ համակրանքի և վշտի Ձեր բարի խոսքի համար:

Ձերդ Սրբության կողմից արված մխիթարությունը պիտի օգնի Հնդկաստանի կառավարության և ժողովրդին՝ արիությամբ կրելու իրենց անփոխարինելի կորուստը և շարունակելու այն ճանապարհը, որ գույք է տվել մեր հանգուցյալ առաջնորդը:

ԼԱԼ ԲԱՀԱԴՈՒՐ ՇԱՍՏՐԻ
Պրեմիեր մինիստր

11 հունիսի 1964 թ.
ՆՈՐ-ԴԵԼՀԻ